## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
## *ՎԱՅՈՑ ՁՈՐԻ*
## *ՄԱՐԶՊԵՏ*

*<< 10>> << Հունվար >> 2017 թ*  N 5
*ք. Եղեգնաձոր*

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
### ՄԵՍՐՈՊ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԱԲՈՒՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 34-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Արտաբույնքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի գրությունը, Մեսրոպ Բաբայանի հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 1-ի N321 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը և Մեսրոպ Բաբայանի դիմումը.

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2017 թվականի հունվարի 10-ից Մեսրոպ Բաբայանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Արտաբույնքի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2017 թվականի հունվարի 10-ից լուծել Մեսրոպ Բաբայանի հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 1-ի N321 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ